

ՌՈՒՔԵՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՇՈՒՐՁ¹

Խաչատուր Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) շատերի հետ ստիպված եղավ անցնել արտասահման, որտեղ, կուսակցական, հրապարակախոսական աշխատանքներին զուգահեռ, ձեռնամուխ եղավ իր հուշերի՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակները»-ի շարադրմանը: Ռուբենը 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչներից է: Նա առաջին հանրապետության տարիներին լուրջ դեր կատարեց արևմտահայ գաղթականների տեղավորման, թուրք-թաթարական հակապետական ապստամբությունների ճնշման, հայոց բանակաշինության գործում:

Ռուբենի հուշերը նախապես (1920-1940-ական թթ.) մաս-մաս հրատարակվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում:

1953 թ. Լոս Անջելեսում Ռուբենի մահից հետո ամերիկահայ մի քանի հայրենասեր բարերարների նախաձեռնությամբ «Յիշատակները» հրատարակվեցին ամբողջական ձևով՝ յոթ հատորով²: Դրանից հետո դրանք վերահրատարակվել են ևս երեք անգամ (1972 թվականին՝ Բեյրութում, 1982 թվականին՝ Թեհրանում և 1990 թվականին՝ Երևանում): Եվս մեկ անգամ 1992 թվականին հիշատակարանը (հակիրճ տարբերակով՝ մեկ հատորով) ֆրանսերեն լեզվով հրատարակվել է նաև Փարիզում:

Ընդհանրապես պատմական գործիչների թողած հուշերը բավականին մեծ արժեք ունեն հայոց պատմության ուսումնասիրության համար: Այս առումով բացառություն չէ նաև Ռուբենի հուշագրությունը, որը շարադրված է դեպքերի անմիջական մասնակցի կողմից:

Ռուբենի հուշագրությունը ոչ միայն օգտակար սկզբնաղբյուր է, այլև սերունդներին ազատության ոգով դաստիարակելու իսկական ուղեցույց: Այն լցված է հայրենաշունչ ոգով ու գաղափարական հագեցվածությամբ:

Հարկ է նշել, որ Ռուբենը մեզ ներկայանում է տաղանդավոր գրողին հատուկ դիտողականությամբ ու գրական ճաշակով, խոր վերլուծություններ անելու բացառիկ կարողությամբ, պատմելու անկաշկանդ ոճով եւ հարուստ լեզվով: Ռուբենի հուշերը հարուստ են ազգագրական, պատ-

¹ Հոդվածն ընդունված է 15.09.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

² Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա-է հատոր, Լոս Անջելես, 1952:

մաաշխարհագրական, դիցաբանական, բանահյուսական տեղեկություններով: Ոչ միայն պատմաբանը, այլև բանասերը, բանաստեղծը, լեզվաբանը, ազգագիրը, վիպագիրը, հոգեբանը անսպառ նյութ կարող են գտնել այստեղ¹:

Հուշերի առաջին հատորում Ռուբենը ներկայացնում է Կարսի կատարած կարևորագույն դերը 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային ազատագրական պայքարում: Կարսում ստեղծվել էր այնպիսի ազգային մթնոլորտ, որտեղ անկախ ծագումից և հասարակական դիրքից, յուրաքանչյուր հայ մոռանում էր հատվածական, եսամոլական, օտարամոլական և այլ վտանգավոր զգացումները: Այստեղ, հանուն սեփական հայրենիքի և ժողովրդի ազատության, բոլորը սիրահոժար պատրաստ էին ցանկացած զոհաբերության: Կարսը յուրահատուկ կայան է եղել Հայաստանի տարբեր հատվածների համար: Ազատագրական պայքարի բոլոր գործիչները երախտագիտության յուրահատուկ զգացում են ունեցել Կարսի հանդեպ: Կարսը հարազատ ապաստարան է եղել բոլորի համար: Եվ դա եղել է ոչ թե իբրև շնորհ, այլ ազգային ծառայություն²:

Կարսը յուրօրինակ «դպրոց» է հանդիսացել հատկապես դեպի Երկիր՝ Արևմտյան Հայաստան, ազատագրական պայքարի մեկնել ցանկացողների համար: Վերջիններիս հետ այստեղ լուրջ աշխատանքներ են տարվել: Կարսը նաև Արևմտյան Հայաստան զենք տեղափոխելու կարևոր հենակետ էր: Ռուբենը նկարագրում է, թե այստեղից ինչպես են Արևմտյան Հայաստան անցել Հրայր Դժոխքի (Արմենակ Ղազարյան), Տուրբախի (Հարություն Կիրակոսյան), Ջալլաթի (Երվանդ Բարբերյան), Իշխան Հովսեփ Արղությանի, Արաբոյի (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան), Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան), Խլաթցի ճարտարի (Հակոբ Վարդանյան, Աղբյուր Սերոբի հորեղբոր որդին), Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովանյան), Սեպուհի (Արշակ Ներսիսյան) և այլոց զինատար խմբերը: Կարսի հեղափոխական պատմությանն անդրադառնալիս Ռուբենը կարևորում է այստեղ Արամ Մանուկյանի (Սերգեյ Հովհաննիսյան) ունեցած դերը բազմատեսակ ուղղություններով տարված կազմակերպական աշխատանքներում:

¹ Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը Ռուբենի հուշագրության արժեքի մասին խոսելիս գրում է, որ եթե Ռուբենի փոխարեն մեկ ուրիշը գնար Տարոն, «ապա, անտարակույս, հայ պատմագրությունը զրկված կլիներ Դուրան-Բարձրավանդակի հեղափոխական շարժման, Գևորգ Չաուշի կյանքի վերջին տարվա, լեռներ բարձրացած կամ անտառներ մտած ֆիդայիների ապրելակերպի, կենցաղի, անձնագրողության, հերոսապատումների անխառն հայրենասիրության նկարագրություններից» (տես՝ Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 1, Երևան, «Հայագիտակ», 2003, էջ 628):

² Ռուբեն, Նշվ. աշխ., Ա հատոր, էջ 121-122:

Ռուբենը գրում է նաև, որ Կարսում և Գյումրիում զենք էին հայթայթում հիմնականում ռուսական զինվորական պահեստներից: Առավել տպավորիչ են Գյումրիի պահեստներից մեկից «Պաղվալի Վաղոյի» ղեկավարությամբ մեծաքանակ զենքի և զինամթերքի դուրս բերումը: Ձենք-զինամթերքի այդ խմբաքանակը հետագայում օգտակար եղավ ոչ միայն Արևմտյան Հայաստանին օգնելու համար: Այդ զենքերը կիրառվեցին նաև Անդրկովկասում թուրք-թաթարական կռիվների ժամանակ¹:

Հուլեթի առաջին հատորում Ռուբենը անդրադառնում է նաև հայ ազատագրական պայքարում ունեցած Հյուսիսային Պարսկաստանի դերին: Նա մասնավորապես խոսում է թուրք պարսկական սահմանի հարևանությամբ գտնվող սուրբ Թադևոս Առաքյալի վանքի մասին: Այս վանքը յուրօրինակ հենակետ էր Պարսկաստանից Վան և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններ զենք-զինամթերք, կռվող ուժեր և գործիչներ ուղարկելու համար: Ռուբենը նշում է, որ չնայած իր առանձնացված վայրում գտնվելուն՝ Թադևոս Առաքյալի վանքը մեծ դեր է կատարել արևմտահայ ազատագրական պայքարում:

Ռուբենը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև թուրք-պարսկական սահմանի վրայով Արևմտյան Հայաստան անցած զինատար խմբերի մասին: Նա նկարագրում է Փոխիկի (Վահրամ Հովհաննիսյան), Հաջի Լևոնի (Ախալցխացի Լևոն), Երկաթի (Արմենակ Լևոնյան) խմբերի սահմանն անցնելու փորձությունները: Խոսվում է, թե արևմտահայ եղբայրներին օգնության հասնելու համար ինչպիսի դաժան փորձությունների միջով են անցել ազատագրական շարժման նվիրյալ գործիչները:

Այս հատորում կրկին խոսելով Կարսի հեղափոխական անցուղարձի մասին՝ Ռուբենը նկարագրում է ևս մի քանի խմբերի սահմանն անցնելու փորձերը, հայ մարտիկների նկատմամբ ռուս զինվորական Բիկովի տմարդի և նենգ վերաբերմունքը, ինչպես նաև վերջինիս ահաբեկումը հայ վրիժառուի կողմից:

Հիշատակների երկրորդ հատորը Ռուբենը սկսում է քիչ հայտնի մի ծրագրի պատմությամբ: 1904թ. նախատեսվում էր Սուխումի-Սոչիի հայության մի մասին վերաբնակեցնել Հյուսիսային Պարսկաստանում՝ պատմական Մեծ Հայքի Հեր և Ջարևանդ գավառներում²: Ծրագրի իրականացումը մասամբ թուրքերի միջամտությամբ, մասամբ հավանական կոտո-

¹ Ռուբեն, Նշվ. աշխ., Ա հատոր, էջ 222:

² Այս մասին առավել մանրամասն իր հուշերում գրում է 1917-1921թթ. Սոչիի Հայոց ազգային խորհրդի նախագահը (տես՝ Կարեն, Արևմտահայ գաղութ մը Կովկասի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1930թ., դեկտեմբեր, 1931թ., յունվար, մարտ, ապրիլ, յունիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 1932թ., յունվար, մարտ, ապրիլ):

րածների մտավախությամբ չիրականացվեց: Ռուբենը գրում է, որ վերաբնակության հարցով ՀՅԴ Բյուրոն նրան գործուղել էր Հյուսիսային Պարսկաստան: Եվ ծրագրի տապալունից հետո նա մնում է Պարսկաստանում՝ Երկիր անցնելու մտադրությամբ: Հենց այս ընթացքում եղած հուշերն էլ ամփոփելիս Ռուբենը ևս մեկ անգամ կարևորում է Հյուսիսային Պարսկաստանի, այստեղ գործող դաշնակցական կազմակերպության դերը արևմտահայ ազատագրական պայքարում: Այս հատորում Ռուբենը կարևորում է թուրք-պարսկական սահմանի վրա գտնվող Դերեկա վանքի դերը: Վանքի դերն արժևորելիս նա հաճախ է մեջբերում Նիկոլ Դումանի խոսքերը: Վերջինս երկար ժամանակ գործել է այստեղ: Դերեկա վանքի դերն այնքան մեծ է եղել, որ ազատագրական շարժման գործիչները նույնիսկ ձեռնամուխ են եղել նրա վերանորոգմանը¹: Ռուբենը նկարագրում է Դերեկա վանքի շուրջ Նիկոլ Դումանի մղած բազմաթիվ կռիվները: Նա անդրադառնում է նաև 1896թ. Խանասորի արշավանքին: Հետաքրքիր են այս մարտական գործողությանը Ռուբենի տված գնահատականները: Նա գրում է, որ արշավանքը մեծ ազդեցություն ունեցավ քրդերի հոգեբանության վրա: Նրանք տեսան, որ հայը կարող է պատժել իրեն կոտորողին և դա կարող է անել կազմակերպված և բավականին մեծ ուժերով: Քրդերի վրա մեծ տպավորություն է թողել ֆիդայիների ցուցադրած ուժը, որ հետագայում ազդել է այդ հայերի հանդեպ շրջանի քրդերի ունեցած տրամադրվածությանը²: Ռուբենը գտնում է, որ Խանասորի արշավանքից հետո մեծապես արդյունավետ են դարձել թուրք-պարսկական սահմանով զինատար և մարտական խմբերի անցումը Վան, որովհետև քրդերը սկսել են վերապահումներով աջակցել կառավարական գործերին և հաճախ զգուշություն են ցուցաբերել հայ զինյալների հետ մարտի մտնելիս: Բացի այդ «բիրեղացաւ այն գաղափարը, որ պէտք է փարիլ զէնքին»³:

Վասպուրականի աշխարհագրական, ընկերային և քաղաքական պայմանները ներկայացնելիս Ռուբենը կենտրոնանում է մի կարևոր հանգամանքի վրա: Նա արձանագրում է, որ Վանում հայերը մեծամասնություն էին կազմում: Այս հատվածում հուշագիրը նկարագրում է նաև 1890-ականներին հայկական երեք ազգային կուսակցությունների ծավալած գործունեությունը Վանում: Վան քաղաքում ուժեղ դիրք ունեին արմենականները: Չնայած որ 1890-ականների սկզբին հնչակյանները հայկական

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա հատոր, էջ 413:

² Նույն տեղը, էջ 423:

³ Ռուբեն, նշվ. աշխ., Բ հատոր, էջ 310:

կուսակցություններից ամենահամատարած և ամենաուժեղն էին՝ Վանուն նրանց դիրքերը թույլ էին: Ռուբենն անդրադառնում է նաև Վանի նահանգում Դաշնակցության գործունեությանը, նշում է, որ այստեղի առաջին դաշնակցական գործիչը Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան) էր: Դաշնակցություն այստեղ առավել հզորության է հասնում 1894 Սասունի ապստամբությունից հետո:

Այնուհետև Ռուբենն անդրադառնում է 1896թ. Վանի կոտորածներին և ինքնապաշտպանական կռիվներին: Արժեքավոր են ինքնապաշտպանությունից հետո Վանից հեռացող մարտախմբերի (Մ. Ավետիսյանի, Մարտիկի, Պետոյի) վերաբերյալ հաղորդած տեղեկությունները:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեն 1896-1905թթ. Վանում ծավալված ազատագրական խմորումների ու իրադարձությունների նկարագրությունները: Առանձնապես հետաքրքիր և յուրօրինակ է Վանա Իշխանի (Նիկոլ Պողոսյան) Վասպուրականի լեռնային շրջաններում՝ Լեռնապարում, կատարած կազմակերպական աշխատանքների նկարագրությունը: Արցախցուն հատուկ համառությամբ նա կարողանում է լեռնային անմատչելի այս շրջաններում ազատագրական պայքարի մղել քուրդ շեյխերի և թուրքական կառավարության կողմից հալածվող ժողովրդին, կազմակերպել նրա կյանքը:

Ռուբենն անդրադառնում է նաև 1905թ. Աղթամարի կռվից հետո Իշխանի կողմից Արսեն վարդապետի սպանվելու փաստին: Արսեն վարդապետը թուրքական կառավարության ներկայացուցիչներին մատնել էր ֆիդայիների՝ Աղթամարի վանքում գտնվելու մասին, ինչի պատճառով անխուսափելի էր դարձել վերոնշյալ կռիվը: Մինչ այդ էլ Արսեն վարդապետը այլ մատնությունների մեջ էր կասկածվում: Եվ Իշխանը որոշում է պատժել նրան: Արսեն վարդապետի սպանությունից հետո խոսակցություններ տարածվեցին, թե սպանությունը տեղի է ունեցել վանքը կողոպտելու նպատակով: Բանն այն է, որ Իշխանը ազգրավել էր վարդապետի բոլոր պատվանշանները, որոնք նա ստացել էր թուրքական պետությունից: Սակայն առեղծվածային էր մնացել վարդապետի մատանու անհայտանալը: Ռուբենը գտնում է, որ Իշխանն իր հետ ոչինչ չպետք է վերցներ, որպեսզի ավելորդ կասկածների տեղիք չտար: (Նա տարբեր ուժերի կողմից մեղադրվում էր վարդապետի մատանին գողանալու մեջ, ինչն ինքը ժխտում էր):

Հուլեթի երրորդ հատորը Ռուբենը սկսում է Տարոնի ազգային-քաղաքական, ժողովրդագրական, վարչական, սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրմամբ: Հուլազգիրը մանրամասն ներկայացնում է 19-րդ դ. վեր-

ջին հայկական այս երկրամասում հայ գյուղացիության ծանր վիճակը, նրանից գանձվող բոլոր հարկատեսակները, թուրքական և քրդական հարստահարությունները, երկրամասի ժողովրդագրական պատկերը, ցույց տալիս, որ հայերը կազմել են բացարձակ մեծամասնություն: Ռուբենն իր հուշերում ևս մեկ անգամ փաստում է այն հանգամանքը, որ Օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում ստեղծել էր այնպիսի վիճակ, որը տեղի բնիկ հայությանը կանգնեցրել էր կամ արտագաղթելու, կամ ձուլվելու, կամ էլ զենքով ազատություն ձեռք բերելու ընտրության առջև:

Այնուհետև հուշագիրը մանրամասն նկարագրում է Տարոնում հայ ժողովրդի ծավալած զինված պայքարը թուրքական բռնատիրության և քրդական սանձարձակությունների դեմ: Նա ներկայացնում է ազատատենչ այս երկրամասում 1880-ականների վերջերից ծավալված բոլոր գործողությունները՝ հայ հոգևորականների և աշխարհիկ առաջին գործիչների քարոզչական աշխատանքները, Մարգար Վարժապետի և Արաբոյի ընդվզումները, Միհրան Տամատյանի կազմակերպչական աշխատանքները և ձերբակալությունը, տարոնցիների բազմաթիվ կռիվներ, որոնք մղվել են ոչ միայն ֆիդայիների, այլև հասարակ գյուղացիների, այդ թվում՝ կանանց կողմից¹:

Արժեքավոր է Ռուբենի կողմից Սասունի 1894թ. ապստամբության նկարագրությունը: Նա նշում է, որ Տամատյանի ձերբակալությունից, Հրայր Դժոխքի Տարոնից բացակայելուց հետո անհրաժեշտություն էր Մեծն Սուրադի (Համբարձում Պոյաճյան) վերադարձը²: Վերջինս ստանձնում է ապստամբության ղեկավարությունը: Հուշագիրը ներկայացնում է ապստամբների կողմից տարբեր՝ Ծովասարի, Շատախի, Սպիտակ սարի, Ալիանքի ճակատներում մղված մարտական գործողությունները, որոնց ընթացքում սասունցիները անասելի հերոսությունների են դիմում: Սասունի առաջին ապստամբությունը ուժերի խիստ անհավասարության պատճառով պարտությամբ է ավարտվում: Ռուբենը նկարագրում է նաև ապստամբության ղեկավարների ձերբակալումն ու բանտարկությունը:

Հուշերի այս հատորում Ռուբենը խոսում է նաև Սասունի 1894 թ. ապստամբության պարտությունից հետո Տարոնում Հնչակյան կուսակցության դիրքերի անկման և դաշնակցական գործիչների ակտիվացման մասին: Հուշագիրը նկարագրում է Տարոնում առաջին դաշնակցական գոր-

¹ Արժանահիշատակ են Վարդենիսի, Ղարաչորանի, Տատրագունի, Շենիկցի կանանց «յոթ գդալի», Սպաղանքի, Խոծոձավանքի, Խնձորեկի, Տալվորիկի և այլ կռիվները: (տես՝ հ. 3, էջ 45-100)

² Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 47-105:

ծիչների՝ Ռոստոմի (Ստեփան Ջորյան), Թաթուլի (Արամ Արամյան), Տուրբախի, Ջալլաթի, Աբրոյի (Սկրտիչ Սահակյան) կատարած աշխատանքները: Առավել տպավորիչ է այս հատվածում Տարոնի հոգևոր առաջնորդներից Վարդան վարդապետ Հակոբյանի գործունեության և դերի արժևորումը: Ռուբենը Վարդան վարդապետի օրինակով ցույց է տալիս, թե հայ հոգևորականները ինչ կարևոր դեր են կատարել հայ ազգային-ազատագրական պայքարում: Վարդան վարդապետը իր համարձակությամբ, նվիրվածությամբ, խնդիրներին դիվանագիտորեն մոտենալու հատկություններով յուրահատուկ տեղ ունի Տարոնի ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ, ինչի մասին հարուստ լեզվով պատմում է հուշագիրը:

Այնուհետև Ռուբենը խոսում է Աղբյուր Սերոբի (Վարդանյան) ծավալած ֆիդայական գործունեության մասին: Նա փաստում է, որ Սերոբի շնորհիվ Խլաթի գավառը 1895-1896 թթ. զերծ մնաց համիդյան կոտորածներից¹:

Հետաքրքիր է նաև Ռուբենի հուշերում 19-րդ դ. վերջին և 20-րդ սկզբին հայ ազգային-ազատագրական պայքարում գյություն ունեցող երկու մարտավարական ուղղությունների ներկայացումը: Ձինված ազատագրական պայքարի հենց սկզբից ուրվագծված այդ ուղղություններն արդեն առավել վառ արտահայտվեցին 1890-ականների վերջերին: Հուշագիրը այդ ուղղություններից մեկն անվանում է ժողովրդական-հեղափոխական, իսկ մյուսը՝ ֆիդայական-զինվորական²: Առաջին ուղղության հիմնական ջատագովը Հրայր Դժոխքն էր, որի կապակցությամբ Ռուբենը երբեմն այս ուղղությունն անվանում է «Հրայրի շկոլա», իսկ երկրորդ ուղղության հիմնական պաշտպանը Գեւորգ Չաուշն էր՝ համապատասխան «Գևորգի շկոլա» անվանումով:

Ժողովրդական-հեղափոխական ուղղությունը մարմնավորում էին նախ Սիիրան Տամատյանը, ապա՝ Վարդան վարդապետը, Գուրգենը (Բաղդասար Մալյան), Սերոբը, Հրայր Դժոխքը: Այս հոսանքի հիմնական գաղափարական հիմնավորումն այն էր, որ պետք էր լրջորեն պատրաստվել ժողովրդական լայն շարժման՝ ձգտելով խուսափել կորստաբեր մանր կռիվներից: Կարևորվում էր նաև հարևան ժողովուրդների հետ դաշնակցած զինված համընդհանուր ապստամբություն բարձրացնելը:

Ֆիդայական-զինվորական հոսանքի ներկայացուցիչները (Գևորգ Չաուշ, Սպաղանաց Մակար, Անդրանիկ և ուրիշներ) սկզբունքով դեմ չէին Հրայրի դավանած ուղղությանը: Ֆիդայական կռիվներին ապավինելը

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 151-153:

² Նույն տեղը, էջ 200:

նրանք պայմանավորում էին ոչ միայն թշնամու հանդեպ լցված վրեժով, այլև այդ ձևով ազատագրական պայքարի գաղափարը ժողովրդի մեջ վառ պահելու անհրաժեշտությամբ:

Աղբյուրագիտական արժեք ունեն մահ Չրայր Դժոխքի գործունեության մանրամասն նկարագրությունները: Վերջինս իրեն հատուկ յեղափոխական փիլիսոփայությամբ ժողովրդին քարոզում էր ապավինել միայն սեփական ուժերին, միասնականությանն ու կազմակերպվածությանը¹: Չրայր Դժոխքը, հետևելով իր դավանած մարտավարությանը, կարողացավ կազմակերպական լուրջ հիմքերի վրա դնել համընդհանուր ապստամբության նախապատրաստությունը: Սակայն թուրքական կառավարության կողմից հրահրված Սասունի 1904 թ. ապստամբությունը փոխեց իրերի ընթացքը:

Այնուհետև Ռուբենը նկարագրում է Սասունի երկրորդ ապստամբությունը, մարտական գործողությունները տարբեր ճակատներում, Չրայր Դժոխքի հերոսական մահը: Չրայրի սպանությունից հետո Սասունի ինքնապաշտպանությունը մտնում է վճռական փուլ: Թուրքերը, սեղմելով պաշարման օղակը, ի վերջո ստիպում են ապստամբներին դադարեցնել դիմադրությունը: Ռուբենը նշում է, որ Սասունի երկրորդ ապստամբության պարտությունից հետո ապստամբության ղեկավարների մոտ կարծրացավ այն համոզումը, որ ֆիդայական մանր կռիվներով հնարավոր չէ հասնել ժողովրդի ազատագրությանը, անհրաժեշտ է լայնածավալ գործողությունների նախապատրաստվել: Այլ խոսքով՝ ազգային-ազատագրական շարժման մեջ արդեն տիրապետող է դառնում Չրայր Դժոխքի դավանած ուղղությունը:

Այնուհետև Ռուբենը ներկայացնում է ֆիդայիների Տարոնից հեռանալը, Աղթամարի կռիվը:

Աղթամարի կռից հետո ֆիդայիների մի մասը Գևորգ Չաուշի և Կորյունի (Գոմսա Իսո) գլխավորությամբ վերադառնում է Տարոն, իսկ մյուս մասը Անդրանիկի գլխավորությամբ անցնում է Կովկաս: Այնուհետև Ռուբենը ներկայացնում է Գևորգի 1904-1905 թթ. ֆիդայապետության շրջանը բազմաթիվ կռիվներով:

Երրորդ հատորի վերջում Ռուբենը հետաքրքիր լեզվով նկարագրում է ֆիդայիների կենցաղը, նրանց ծանր, զրկանքներով ու վտանգներով լի կյանքը²:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 238:

² Նույն տեղը, էջ 425-444:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի լուսաբանման առումով պակաս արժեքավոր չէ Ռուբենի հիշատակների չորրորդ հատորը: Այստեղ նախ հուշագիրն անդրադառնում է 1906թ. Տարոնում տիրող կացությանը և Յ.Յ.Դաշնակցության կողմից տարվող քաղաքականությանը: Սասունի ապստամբության ճնշումից հետո թուրքական իշխանություններն ավելի էին խստացրել բռնաճնշումները ժողովրդի նկատմամբ: Հեղափոխական գործիչների համար տեղաշարժվելը, առավել ևս գործունեություն ծավալելը դարձել էր խիստ դժվար և վտանգավոր: Այս պայմաններում աշխատելու լուծումներ է առաջարկում 1906թ. ամռանը Սուրբ Կարապետի անտառներում տեղի ունեցած Դուրան Բարձրավանդակի Շրջանային ժողովը¹:

Այս հատորում Ռուբենը կրկին անդրադառնում է ազատագրական պայքարի մարտավարությանը: Նա նշում է, որ Գևորգ Չաուշը նույնպես աստիճանաբար հակվում էր համընդհանուր ապստամբությանը նախապատրաստվելու գաղափարին: Ռուբենն այստեղ նկարագրում է բազմաթիվ ֆիդայիների կողմից գործած հերոսական դեպքեր, մարտական գործողությունները: Առավել արժեքավոր և տպավորիչ է Սուլուխի կռվի և Գևորգի մահվան նկարագրությունը²:

Հատկանշական է այն, որ Ռուբենը մեղադրվում է Գևորգ Չաուշի սպանության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ Ռուբենի կարծիքը իրեն վերագրվող մեղադրանքի վերաբերյալ առաջին հայացքից կարող է ոչ առարկայական թվալ, այնուամենայնիվ, մեր համոզմամբ՝ նա չէր կարող Գևորգին սպանել: Ռուբենն իր հուշերում նկարագրում է դեպքերի ընթացքը Սուլուխում, որից պարզ երևում է նրա անմեղությունը:

Իրականում Ռուբենին մեղադրելու հիմքն այն է, որ Ռուբենը և Գևորգը ազգային-ազատագրական պայքարը շարունակելու տարբեր մարտավարական ուղղություններ էին դավանում: Սակայն այս պնդումը անհիմն է, քանի որ Ռուբենն արդեն համոզել էր Գևորգին:

Չորրորդ հատորում այնուհետև Ռուբենը նկարագրում է Տարոնում տեղի ունեցած բազմաթիվ իրադարձություններ: Եվ դեպքերը հասնում են մինչև Օսմանյան սահմանադրության հռչակումը:

Հինգերորդ և վեցերորդ հատորներում պատմագիտական առումով արժեքավոր են Օսմանյան սահմանադրության հռչակման և նրա վերաբերյալ հայ քաղաքական գործիչների և անձամբ հուշագրի կարծիքների վերաբերյալ եղած անդրադարձը:

¹ Դուրան-Բարձրավանդակ կռիվում էր 737 Տարոնի կազմակերպական շրջանը:

² Ռուբեն, նշվ. աշխ., Դ հատոր, էջ 157-199:

Ռուբենը նշում է, որ սուլթանին տապալված տեսնելու համընդհանուր ոգևորվածությունը կուրացրել էր բոլորին: Միայն քչերն էին, ովքեր խիստ վերապահումներով էին մոտենում հռչակված ազատությանը, արդարությանը և հավասարությանը: Ռուբենը, քննելով դաշնակցության դիրքորոշումը, գրում է, որ թեև կուսակցությունը պայքարում էր սուլթանին տապալելու համար, հետագայի գործնական քայլերը մշուշոտ էին: Մինչդեռ, ըստ նրա, կարելի էր նույնիսկ վերահսկել ամբողջ հեղափոխական շարժումը և դեպքերը զարգացնել ցանկալի ընթացքով: Դրա համար անհրաժեշտ էր առանձին-առանձին գործելու փոխարեն համախմբել ուժերը: «Իթթիհատտի համօսմանեանականութենէն դէպի համիսլամականութիւն եւ համաթուրանականութիւն հակելու յանցանքը պէտք որոնել ոչ միայն թուրքերու, այլ եւ Օսմանեան պետութեան բաղկացուցիչ ազգերու՝ ալպանացիներու, մակեդոնացիներու, յոյներու, պուլկարներու, արաբներու եւ հայերու մէջ, որոնք ընդհանուր պետական ամբողջականութեան հողէն զուրկ, աւելի տարուած էին իրենց մասնակի շահերու ապահովման մտահոգութեամբ», - գրում է հուշագիրը¹:

Անդրադառնալով սահմանադրությունից ակնկալվող բարեփոխումներին Ռուբենը գրում է, որ սահմանադրության ելությունը պետք է կազմեն հայերի իրավունքների վերականգնումը, հողային խնդրի լուծումը, հին պաշտոնյաների, աղաների, աշիրեթների ոչնչացումը, տուրքերի կանոնավորումը:

Հայտնի է, որ սահմանադրության հռչակումից հետո Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարը անկում ապրեց: Ստեղծված իրավիճակում դաշնակցությունը, ցավոք, կորցրեց զգոնությունը, և ինքնապաշտպանության խնդիրը այլևս գերակա ուղղություն չէր:

Սահմանադրության ընդունումից հետո Ռուբենը սբ. Կարապետի վանքում հրավիրում է ՀՅԴ Տարոնի (Դուրան-Բարձրավանդակի) շրջանային ժողով: Ժողովը որոշում է, որ սահմանադրության առկայության պայմաններում ֆիդայիները դառնան պարզ քաղաքացիներ, անցնեն իրենց ընտանեկան հարկերի տակ եւ զբաղվեն գյուղատնտեսական աշխատանքներով²:

Ռուբենը երկար ժամանակ զինվորական և նման տիպի կազմակերպական աշխատանքներ կատարելուց հետո դժվարանում էր, իրեն պատրաստ չէր գտնում զբաղվելու մշակութային գործունեությամբ: Նա ժողովի

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Ե հատոր, էջ 41-42:

² Նույն տեղում, էջ 53:

ընդունած բանաձևերի մասին գրում էր. «զլուխս համաձայն էր ասոր, բայց հոգիս եւ զգացմունքներս կբողոքեին»¹:

Նկարագրելով Տարոնում սահմանադրության հռչակումից հետո ստեղծված իրավիճակը՝ Ռուբենը նշում է, որ հայ ազգաբնակչության համար իրականում տեղի ունեցած փոփոխությունները շատ քիչ էին: «Յայերի վրայից վերացուած էին քաղաքական հալածանքները, բայց նրանց տուն տուող բոլոր վարչական թէ տնտեսական, արդարադատական թէ ոստիկանական, աւատական թէ կրօնական յոռի վերաբերումները կը շարունակուէին: Սահմանադրութիւնը եկած էր՝ իշխանութիւնը եւ ոչ թէ ռեժիմը փոխելու: Այդ աւելի զգալի էր գաւառներում, մանաւանդ Տարոնում», - գրում է Ռուբենը²:

Բավական տպավորիչ է Ռուբենի այն նկարագրությունը, որ երիտթուրքական տեղացի ղեկավարները մեծ զոհաբերություն և շնորհ էին համարում հայերին՝ որպէս քրիստոնյաների, հալածանքներից ազատելը: Սակայն կաշառակերությունը, հարստահարությունը առաջվա նման բնական էին համարվում, նրանք անկեղծորեն չէին կարող ըմբռնել դրանց վերացումը:

Մինչդեռ հայության մոտ բավական մեծ հույսեր էին արթնացել: Ըստ Ռուբենի՝ այնքան մեծ էր ոգևորությունը, որ Օսմանյան խորհրդարանի պատգամավոր ընտրված Մշո Գեղամը (Գեղամ Տեր-Կարապետյան) 21 կետից բաղկացած մի ծրագիր է կազմում: Այս ծրագիրը նախատեսում էր բոլոր գաղթականների, պանդուխտների վերադարձ, քաղաքական և տնտեսական իրավունքների վերականգնում, քաղբանտարկյալների ազատ արձակում, հայերից խլված հողի և գուլքի վերադարձ, հայկական գյուղերում բռնի տեղավորված մահմեդականների վտարում, հավասար իրավունքով քրիստոնյաներին զենք կրելու թույլտվության ստացում, ազգային եկեղեցական սեփականության վերականգնում, քրիստոնյաների հավասար իրավունքի տրամադրում պետական տարբեր պաշտոններում, հատկապէս դատարաններում և այլն³:

Սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ ոչ մի էական փոփոխություն էլ չի լինելու: Դաշնակցության հավատը դեպի երիտթուրքերը սպառվում է: Պարզ է դառնում, որ անհիմաստ է երիտթուրքերի միջոցով կամ օգնությամբ վերագրավել կորսված ազգային և հողային իրավունքները, նպաստ բերել հայկական բարենորոգումներին: Ավելին՝ դրանց

¹ Ռուբեն, նշվ. աշխ., Ե հատոր, էջ 75:

² Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 94:

³ Նույն տեղում, էջ 98-100:

մասին երիտթուրքերին հիշեցնելը նոր աղետ էր բերելու հայ ժողովրդի գլխին: Ռուբենը գրում է, որ արդեն 1909թ. սկզբից «թուրք յեղափոխութիւնը աւելի ակներեւ կերպով ցուցադրեց իր անկարողութիւնը կամ դիտաւորեալ չկամութիւնը հայերու հանդէպ»¹:

Ուշագրաւ է Ռուբենի դիտողությունը 1909թ. մարտի 12-ին երիտթուրքերի, հնչակյանների, դաշնակցականների և ևս մի քանի քաղաքական կազմակերպությունների միջև կնքված հեղափոխությունը խորացնելուն միտված համաձայնագրի վերաբերյալ: Հուշագիրը նկատում է, որ համաձայնագրի ստորագրմանը չեն մասնակցել բալկանյան, հունական, քրդական, արաբական կուսակցությունները: Եւ տարօրինակ ձևով այս ժողովուրդները գերծ մնացին ցեղասպանությունից և հասան անկախանալու իրենց նպատակին²:

Հետաքրքիր է նաև Ռուբենի կողմից օսմանյան սահմանադրության օրերին Կ. Պոլսում գտնվող գերմանացի մի լրագրող Պարվուսի տպավորությունների ներկայացումը: «Դուք կ'ըսեք՝ թուրք յեղափոխութիւն, բայց ես կը տեսնեմ, որ հոս չկայ յեղափոխութիւն, այլ կայ յեղաշրջում: Դուք կ'ըսեք՝ հին եւ որ ռեժիմներ, բայց ես այդ չեմ տեսներ, այլ կը տեսնեմ անձերուն եւ դերակատարներու փոփոխութիւն միայն, տարբեր հագուստներու մէջ, ինչ որ չի նշանակեր յեղափոխութիւն: Ատոր համար է, որ համենատաքար անարիւն է այսպէս կոչուած թուրք յեղափոխութիւնը: Ֆրանսայի մէջ յեղափոխութիւնը արիւնալի էր, որովհետեւ հոն յեղափոխութիւն կար, իսկ հոս՝ պաշտօններու նոր բաժանում միայն», - ասում է Պարվուսը³: Փաստորեն այս ընթացքում Կ. Պոլսում գտնվող եվրոպացիները ևս տեսնում ու համոզվում էին, որ Թուրքիայում տեղի ունեցածը պարզ հեղաշրջում էր միայն, որից ոչ թուրք ժողովուրդների կյանքում դրական փոփոխությունները ակնառու չէին:

Թեև հռչակվել էր ազատություն, Ռուբենը ներքին մտավախություն ուներ երիտթուրքերին չվստահելու, ինչի կապակցությամբ նա գրում է. «Համիդը թէև արքորական էր եւ Ելլտըզը զբօսարան, բայց անոնց ուրուականները աւելի հզօր էին դարձած:... Հավասարութեան, եղբայրութեան, ազատութեան ցուցատախտակները աչքիդ առջեւ էին, բայց անորոշ բան մը կը հարկադրէր շօշափել գրպանդ՝ ատրճանակիդ ներկայութիւնը ստուգելու համար»⁴:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 108:

² Նույն տեղում, էջ, 138:

³ Նույն տեղում, էջ 303:

⁴ Նույն տեղում, էջ 371:

Իսկ այդ մտավախության պատճառը թերևս այն էր, որ Սուլթանի հեռանալով չէր հեռացել նրա դավանած պանիսլամիզմի գաղափարախոսությունը, ընդհակառակը, այն սկսվեց օգտագործվել որպես պետական գաղափարախոսություն¹:

Առանձնապես հետաքրքիր է պոլսահայ մտայնության վերլուծումը Ռուբենի կողմից: Տպավորիչ է նրա կողմից պոլսահայերին տրվող բնորոշումը. «Կ. Պոլսում հայերը գերազանցապես ազգասեր են, Իսկ Հայաստանում՝ հայրենասեր»²:

Ռուբենը գրում է, որ թուրքական իշխանությունները թեև իրենց ձեռքում էին պահում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և ազգային մարմինները, այնուամենայնիվ բավարար երաշխավորված չէին ամբողջ կայսրության հայությանը հնազանդության մեջ պահելու առումով: Թերևս սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ հայկական գավառներից աչքի ընկնող գործիչներին փորձում էին տեղափոխել Կ. Պոլիս, իսկ չենթարկվելու դեպքում հալածում էին երկրից:

Թուրքերին հաջողվել էր երկատել կայսրության տարածքում ապրող հայությանը: «Թուրք քաղաքականութունը կարողացած էր հայութեան ամբողջական մարմնին մեջ երկ ու իրարու հակառակ տարրեր ստեղծել: Գլուխը՝ բերուած էր Պոլիս, ու ան դադրած էր լինելէ ցանկալի եւ կենսական ազդակ մը հայութեան համար: Մարմինը կը մնար Հայաստանի գաւառներուն մէջ: Միեւնոյն մարմնի երկու մասերը իրարու հակադիր էին եղած ու այդպես ալ հասան 1908-ի սահմանադրութեան», - գրում է Ռուբենը³:

Կարելի է ասել, որ այս երկատված վիճակը ևս պայմանավորեց հայոց ցեղասպանության ժամանակ լուրջ դիմադրության բացակայությունը հայերի կողմից:

Ոչ պակաս արժեքավոր է Ռուբենի հիշատակների յոթերորդ հատորը, որի առաջին հատվածում ներկայացված է խմբապետ Մուշեղ Ավետիսյանի հուշերը 1915-1916 թթ. Սասունի հերոսամարտի մասին⁴:

Այս հատորում առանձնապես հետաքրքիր են ՀՀԳ-Բոլշևիկ համագործակցության փորձերի վերաբերյալ տեղեկությունները: Այստեղ հուշագիրը ներկայացնում է համատեղ գործունեության նախագիծը⁵:

¹ Ռուբեն, նշվ. աշխ., 2 հատոր, էջ 372-373:

² Նույն տեղում, էջ 320:

³ Նույն տեղում, էջ 347:

⁴ Մուշեղ Ավետիսյանի հուշագրության արժեքի մասին գրել է պատմաբան Միեր Կարապետյանը (տես՝ Կարապետյան Ա., Գևորգյան Է., Մելքոնյան Է., Արզարյան Ա., Հայոց մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 103-107):

⁵ Ռուբեն, նշվ. աշխ., է հատոր, էջ 142-143:

Այստեղ տեղեկություններ կան Հայատանի առաջին Հանրապետության կազմավորման, ներքին կյանքի կազմակերպման, գաղթականության տեղավորման, թաթարական հակապետական ապստամբությունների զսպման, ՀՅԴ նորընտիր բյուրոյի գործունեության մասին:

Այսպիսով՝ անվերապահորեն կարելի է պնդել, որ Ռուբենի հուշագրությունը 19-րդ դ. վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության համար լավագույն սկզբնաղբյուրն է: Այստեղ մանրամասն տեղեկություններ են ներկայացված հայ ֆիդայական շարժման վերաբերյալ: Հանգամանալից ներկայացվել են հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնական ռազմավարությունն ու մարտավարությունը: Արժեքավոր են Օմանյան սահմանադրության հռչակումից հետո հայության համար ստեղծված կացության վերլուծությունն ու գնահատականները: Ռուբենի հիշատակները սկզբնաղբյուրային նշանակություն ունեն նաև Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրման համար:

Ռուբենի հուշագրությունը նաև յուրատեսակ ինքնագնահատական կարելի է համարել ազգային-պետական գործչի ծավալած բազմամյա հայրենանվեր գործունեության:

Об историкографической ценности мемуаров Рубена.

Хачатур Степанян

Резюме

В статье делается попытка представить историкографическую ценность мемуаров выдающегося деятеля Рубена (Минас Тер-Минасян). Его труд (“Воспоминания армянского революционера”) является непревзойденным источником для исследования истории армянского национально-освободительного движения, отношений между АРФД и младотурками, Первой Республики Армении.

On Historic Values of Ruben's Memories

Khachatur Stepanyan

Summary

The article tries to present historic value of eminent actor Ruben's (Minas Ter-Minasyan) memories. “Memories of an Armenian Revolutioner” is a unique source for exploring of Armenian revolutionary-liberation struggle, relations between Armenian Revolutionary Party and Yeritturks, and for the survey of history of the First Republic of Armenia.